ՀԱՐԳԵԼԻ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐ,

2025թ. փետրվարի 17-ից կմեկնարկեն գարնանային կիսամյակի դասընթացները, որոնց մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես **գրանցվել:**

Գրանցվելուց առաջ խնդրում ենք հանգամանալից ծանոթանալ *ներքոնշյալ պահանջներին կամ ցուցումներին և խստագույնս հետևել դրանց:*

➢ Դասընթացներին մասնակցելու համար պետք է գրանցվել մինչև սույն թվականի ***փետրվարի 10-ը ներառյալ***:: Նշված ժամկետում չգրանցվելու դեպքում կզրկվեք այս կիսամյակի համապատասխան դասընթացին/ներին մասնակցելու հնարավորությունից:

➢ Գրանցվելուց առաջ **մանրամասն ծանոթացեք դասընթացների ժամանակացույցին** (տե՛ս «դասընթացների ժամանակացույց» փաստաթուղթը) և այդուհետ կատարեք ընտրությունը:

➢ « ***Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ»*** դասընթացին մասնակցության տեղերը սահմանափակ են: Առավելագույնը 50 ասպիրանտ/հայցորդ կարող են գրանցվել և մասնակցել: Խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե վստահաբար մասնակցելու եք դասընթացին:

➢ *Հումանիտար մասնագիտություններ ունեցող ասպիրանտներն ու հայցորդներն* ***անգլերեն լեզվի (դասախոս՝ բ.գ.թ. Լ. Մարգսյան) խումբն ընտրելիս պետք է հաշվի առնեն հետևյալը՝***

ա/ խումբ 1-ը նախատեսված է անգլերենի իմացության B1 և ավելի բարձր մակարդակ ունեցողների համար:

բ/ խումբ 2-ը նախատեսված է անգլերենի իմացության B1–ից ցածր մակարդակ ունեցողների համար:

Խնդրում ենք անգլերենի խմբերում գրանցվելուց անպայման հաշվի առնել վերոգրյալը՝ այդ կերպ նպաստելով դասերի արդյունավետության բարձրացմանը:

Անգլերենի իմացության ձեր մակարդակը ստուգելու համար կարող եք անցնել https://www.europa-school.co.uk/language-level-test/ հղմամբ և լրացնել համապատասխան թեստը: Անգլերենի իմացության Ձեր մակարդակը պարզելուց հետո միայն գրանցվեք ԽՈՒՄԲ 1-ում կամ ԽՈՒՄԲ 2-ում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

- ***Գրանցվելիս*** *նշեք* ***ԵՊՀ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ*** *կողմից ձեզ տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն:*

- ***Գրանցվեք ՄԻԱՅՆ*** *այն դասընթացին/ներին, որոնց վստահաբար մասնակցելու եք: Պարտադիր չէ ընտրել բոլոր դասընթացները:*

- ***ՄԻ՛ԳՐԱՆՑՎԵՔ*** *այն դասընթացներին, որոնց նախկինում մասնակցել եվ ստացել եք ստուգարքը: նման դեպքերում հավելյալ կրեդիտ չեք կուտակելու:*

- *Հումանիտար մասնագիտություններ ներկայացնող ասպիրանտներն ու հայցորդներն անգլերեն լեզվի դասընթացն ընտրելիս և գրանցվելիս* ***Չ՛ՊԵՏՔ Է*** *ընտրեն բնագիտական մասնագիտություններով ասպիրանտներին կամ հայցորդներին դասավանդող դասախոսների և հակառակը*

- ***ԳՐԱՆՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ Է ԱՌՑԱՆՑ ԵՂԱՆԱԿՈՎ:*** *Յուրաքանչյուր դասընթացին գրանցվելու համար պետք է անցնել հենց այդ դասընթացի համար ստեղծված հղմամբ և լրացնել պահանջվող տվյալները:*

Առցանց դասընթացներն անցկացվելու են www.e-learning.ysu.am հարթակում:

Հետազոտողի պատրաստման կրթական ծրագրով նախատեսված է, որ Ձեր ***ողջ ուսումնառության ընթացքում դասընթացների մասով*** պետք է կուտակել ***առնվազն 32 կրեդիտ***, որից ***12-ը պարտադիր դասընթացներից***, իսկ 20-ը՝ ***ընտրովի***: ***Պարտադիր դասընթացները*** երեքն են՝

1. ***«Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» - 4 կրեդիտ***
2. ***«Անգլերեն լեզու» - 4 կրեդիտ***
3. ***«Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» - 4 կրեդիտ***

ՀԻՇԵՑՆԵՆՔ նաև, որ պարտադիր համարվում են այն դասընթացները, որոնց դուք չեք կարող չմասնակցել Ձեր ուսումնառության ընթացքում: Այդ դասընթացները նախընտրելի է ընտրել ուսումնառության առաջին տարվա ընթացքում: Ինչ վերաբերում է մյուս դասընթացներին, ապա դրանք ընտրովի են և ունեն տարբեր կրեդիտատարություն:

ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ և ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՀՂՈՒՄՆԵՐԸ:

ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ /4 կրեդիտ/՝ Ա. Ավագյան https://forms.gle/2itajJLt5w67PWV98

2. Անգլերեն լեզու (բնագիտական մասնագիտությունների համար) /4 կրեդիտ/՝ Ե. Երզնկյան https://forms.gle/5n5A61a6r5Uvp11i8

3. Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար) /4 կրեդիտ/՝ Խումբ 1՝ B1+ մակարդակ – Լ. Սարգսյան https://forms.gle/ft5eF6m7oBSB1wm77

4. Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար) /4 կրեդիտ/՝ Խումբ 2՝ մինչև B1 մակարդակ – Լ. Սարգսյան https://forms.gle/1Uxotdrhjb4oidgB7

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. Անձնային աճ և ինքնակարգավորում /3 կրեդիտ/՝ Ն.Խաչատրյան՝ https://forms.gle/VnZJYtQQWHzmnu7L6

2. Համալսարանական դասավանդման դիդակտիկա /3 կրեդիտ/ ՝ Ս. Խաչատրյան https://forms.gle/nPQiNf2zQEz5nYMz8

3. Գիտաչափություն և գիտական շտեմարաններ /3 կրեդիտ/ ՝ Ա. Գևորգյան https://forms.gle/22csDDn4rVX3KkVf9

4. Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ /6 կրեդիտ/՝ Ա. Ապիտոնյան https://forms.gle/dUhb7UJeEzeojWem7

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել ԵՊՀ պաշտոնական կայք (www.ysu.am) կամ դիմել ԵՊՀ դոկտորական կրթության կենտրոն (Ա. Մանուկյան 1, հեռ.՝ (060) 710 – 188, (010) 555 - 531):